ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն ----------/Մ. Սարգսյան/

04.09.2023թ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Շիրակի մարզի

″Սարալանջի միջն. դպրոց″ ՊՈԱԿ

երկրորդ դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Ռոզա Ղազարյան Արտակի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« -2023--2024 » ուսումնական տարի

Դասարանի ղեկավարը

(տարրական դպրոցում՝ դասվար)

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2) նպաստում է հանրակրթական դպրոցի և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը սովորողների նկատմամբ.

3) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

4) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հանրակրթական դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

5) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

6) մանկավարժական խորհրդի քննարկմանն եէ ներկայացնում սովորողին կարգապահական տույժի ներկայացնելու հարցը.

7) արգելում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առառողջության, կյանքի համար վտանգ պարունակեն, ինչպես նաև խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

- Կազմում է աշխատանքային պլան՝ելնելով դասարանի տարիքային խմբից:
- Կատարում է դասալսումներ:
- Շաբաթական առնվազն մեկ անգամ անցկացնում է դասղեկի ժամ և գրանցում դասամատյանում:
- Լրացնում է դասարանի աշակերտների անձնական գործերը:
- Պարբերաբար հրավիրում է ծնողական ժողովներ՝ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն:
- Վարում է դասագրքերի վարձավճարների հավաքագրման մատյանը:

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)** *Դասարանը բաղկացած է յոթ հոգուց: Ընդհանուր առմամբ աշակերտները ունեն բավարար ընդունակություններ: Չկա գերազանց սովորող աշակերտներ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Դասարանի որոշ աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է անբավարար: Չնայած այս հանգամանքին՝ երեխաները հաճախում են դպրոց ճիշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:*

2. **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում** *Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :*

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն** *Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:*

3.2 Գեղագիտական դաստիարակություն *Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել, թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:*

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն *Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:*

3.4 Ֆիզիկական դաստիարակություն *Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:*

3.5 Աշխատանքային դաստիարակություն *Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:*

3.6 Բնապահպանական դաստիարակություն *Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:*

4. Դպրոց-ընտանիք կապը *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:*

Դասարանի կազմը

1. Ավետիսյան Նարե Սարգսի
2. Բոբիկյան Էմմի Լուկաշի
3. Գրիգորյան Միեր Բենյամինի
4. Գրիգորյան Վահագն Բենյամինի
5. Գրիգորյան Վարդան Գրիգորի
6. Դանիելյան Մանե Նարեկի
7. Թումասյան Ալիկ Ծովակի
8. Մանուկյան Մարի Մարտինի
9. Մելիքսեթյան Դավիթ Ահարոնի
10. Մուրադյան Անի Մարտինի
11. Սիմոնյան Դավիթ Համազասպի
12. Սիմոնյան Լյուսի Անդրանիկի

ՄԵՐ ԴԱՍԱՐԱՆԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ

- Օբյեկտիվ լինել իր անձի և ուրիշների նկատմամբ
- Ազնվորեն ընդունել սխալները
- Կարողանալ լսել, հավատալ և հետևություններ անել
- Հոգատար լինել դիմացինի նկատմամբ
- Հանդուրժող լինել միմյանց նկատմամբ

ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Դասարանում սովորում են 12 աշակերտ՝6 աղջիկ, 6 տղա: Յուրաքանչյուր աշակերտ գիտակցում է սովորելու անհրաժեշտությունը, կարևորությունը, կարողանում են հաղթահարել իրենց առջև ծառացած դժվարությունները: Նրանց մեջ դաստիարակվում է ազնվության, աշխատասիրության, պարտաճանաչության, ինքնուրույնության զգացում, լինեն ճշտախոս, ազնիվ, համերաշխ, հարգալից թե՛ շրջապատում, թե՛ կոլեկտիվում: Բոլորն էլ հաճախում են մաքուր, կոկիկ:Կան և ուսման առաջավորներ, և հետ մնացողներ, և նրանց հետ տարվում են լրացուցիչ աշխատանքներ:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Դասարանի ծնողական խորհրդի կազմը

Նախագահ՝ Ավետիսյան Մարինե

անդամներ՝ Թումասյան Անուշիկ

անդամներ՝ Սևոյան Սյուզաննա

անդամներ՝

անդամներ՝

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԴԱՍԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Անցկացման օրը, ամիսը տարեթիվը	Քննարկվող հարցերը	Ծնողական խորհրդի նիստերի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն
31.0 .	Գրենական պիտույքներ. գրքեր. դասագրքեր նախապատրաստում ուսումնական տարվա հաջո- ղությանը և [illegible]:		
9.09.	Խմբակների և ընթերցանության ժամերի կազ- մակերպման հարցերի քննարկում: [illegible] [illegible], [illegible], ճաշերու հարցերի քննարկում: Ծնողի անձնական օրինակը երեխայի կյանքում:		

ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ

(ուսուսումնական տարվա ընթացքում կատարած աշխատանքների համառոտ ամփոփում և վերլուծություն)

Դասղեկի ժամերի թեմատիկա

- Մենք 2-րդ դասարանցի ենք և պետք է լավ աշխատենք
- Հայաստան, ես մի մասնիկն եմ քո բազկի…
- Իմ պարտականությունները դպրոցում
- Իմ Ընտանիքը
- Իմ օրվա ռեժիմը
- Ճիշտ սնվելու իմ տարբերակը
- Բարեկամությունը սկսվում է ժպիտից
- Հայաստան, իմ հայենիք, իմ տուն
- Սիրում եմ….
- Ոսկեհեր աշուն
- Որտեղի՞ց է սկսվում հայրենիքը
- Սպորտը նորաձևությու՞ն է, թե՞ առողջության գրավական
- Ինչ է ընկերությունը
- Մեր փոքրիկ բարեկամները
- Ի՛նչ գեղեցիկ ես ձմեռ
- Ամանորի հյուսած հեքիաթը
- Հայստանի պաշտպանները երեկ, այսօր և վաղը
- Հայոց բանակ
- Տյարընդառաջ
- Ի՞նչ հետաքրքիր բաներ կան գրքերում
- Ինչպե՞ս սովորել միայն լավ գործեր անել
- Ուժեղ լինել , նշանակում է…
- Մենք գարնան ծաղիկներ ենք
- Դռները բացե՛ք, գարուն է գալիս
- Զատկի տոնի խորհուրդը
- Ո՞ր գրական հերոսին կուզեի նմանվել

- Ինչպե՞ս պաշտպանվել բնական աղետների ժամանակ
- Ես աշխարհի ու ինձ համար խաղաղություն եմ ուզում
- Ինչպես գեղեցիկ դարձնել մեր շրջապատը՝ դպրոցը, բակը, տունը
- Գրքերի վերանորոգման աշխատանքներ
- Դեպի ամառ՝ ամառային առաջադրանքներ
- Էքսկուրսիա

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարողներ
I	<<Եթե ես լինեի ...>> թեմայով քննարկում: Նպատակն է վեր հանել կարողությունները և հմտությունները:	աշակերտ դասղեկ
II	<< Բնական աղետներ >> ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները:	աշակերտ դասղեկ
III	<< Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում>> նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները::	աշակերտ դասղեկ
IV	<< Պետական խորհրդանիշներ>> թեմայով զրույց:Նպատակն է աշակերտներին ներկայացնել ծագման և ձևավորման ուղին:	աշակերտ դասղեկ
V	<< Կարող եմ օգտակար լինել >> թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարին և դրական հատկանիշները:	աշակերտ դասղեկ
VI	<< Ազգային և միջազգային տոներ>> նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները:	աշակերտ դասղեկ
VII	<< Ինչպես վարվել աղբի հետ >> օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թափոնների վնասակար ազդեցությանը բնության և մարդու առողջության վրա:	աշակերտ դասղեկ
VIII	<< Ինչ է պետք ներառումը >> աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքավոր մարդկանց նկատմամբ:	աշակերտ դասղեկ
IX	<< Ազգ և պետություն >> թեմայով բաց քննարկում և վերլուծություն:	աշակերտ դասղեկ
X	<< Գնահատիր ինքդ քեզ >> նպատակն է արժևորել արժե համակարգ ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլուծություն:	աշակերտ դասղեկ
XI	<< Գնահատվող մրցույթ >> թեման հնարավորություն կընձեռի ճանաչել իրենց շրջապատող անձանց և շտկել թյուր կարծիքները:	աշակերտ դասղեկ
XII	<< Պատասխանատու քաղաքացի >> աշակերտները այս թեման ուսումնասիրելուց հետո կիմանան թե ինչպես պետք է լինի ցանկացած քաղաքացի:	աշակերտ դասղեկ

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարողներ
XIII	<<Ամառային ճամբար>> այս վարժության նպատակն է աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողականության գաղափարը	աշակերտ դասղեկ
XIV	<<Քանի լեզու գիտես այնքան մարդ ես >> թեմայով զրույց: Ձևավորել բազմակարծություն և աշխարհահայացք	աշակերտ դասղեկ
XV	<< Պետական խորհրդանիշներ>> թեմայով զրույց:Նպատակն է աշակերտներին ներկայացնել ծագման և ձևավորման ուղին:	աշակերտ դասղեկ
XVI	<<Կարողությունների հստակեցում >> թերթիկի միջոցով հստակեցնել թե ինչ կարողություններն են ավելի զարգացած:	աշակերտ դասղեկ
XVII	<< Ես էլ քեզ նման եմ >> թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:	աշակերտ դասղեկ
XVIII	<< Պոլիեթիլենի տոպրակներն ու շրջակա միջավայրը>> ասոցացնել հին և նոր դասը տալ խնդրին նոր լուծումներ:	աշակերտ դասղեկ
XIX	<< Փոքրիկ պատմություններ անհատի և հասարակության խնդիրների մասին >> նպատակն է աշակերտներին տեղեկացնել թե մարդկությունը ինչ ժամանակաշրջան է անցել:	աշակերտ դասղեկ
XX	<< Ազգային և միջազգային տոներ>> նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները:	աշակերտ դասղեկ
XXI	<< Գնահատվող մրցույթ >> աշակերտները կզարգացնեն և կստուգեն իրենց գիտելիքները կկարողանան խմբում հաջողությունն ապահովելու համար:	աշակերտ դասղեկ
XXII	<< Ասացվածքի ամբիոն >> աշակերտներին ծանոթացնել ժողովրդական բանահյուսության մի տեսակին՝ ասավածքին և նրանց մեջ զարգացնել բարոյական արժեքներ մարդկանց նկատմամբ հարգանք մարդասիրություն:	աշակերտ դասղեկ
XXIII	<< Հայոց Մեծ եղեռն >> աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը : Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն:	աշակերտ դասղեկ
XXIV	<<Ազգային զարթոնք>> ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողություններին: Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ:	աշակերտ դասղեկ
XXV	<< Սպառողների իրավունքներ >> ներկայացնել և ձևավորել իրենց իրավունքները , որպես	աշակերտ դասղեկ

	սպառողներ:	
XXVI	<< Ապագայի ծառը >> խթանում է վերլուծելու պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները:	աշակերտ դասղեկ
XXVII	<< Պատասխանատու քաղաքացի >> աշակերտները այս թեմայի ուսումնասիրելուց հետո կիմանան թե ինչպես պետք է լինի ցանկացած քաղաքացի:	աշակերտ դասղեկ
XVIII	<< Ինչու է պետք ներառումը >> աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքավոր մարդկանց նկատմամբ:	աշակերտ դասղեկ
XXIX	<< Գնահատիր ինքդ քեզ >> նպատակն է արժևորել արժեհամակարգ ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլուծություն:	աշակերտ դասղեկ
XXX	<< Կարող եմ օգտակար լինել >> թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարին և դրական հատկանիշները:	աշակերտ դասղեկ
XXXI	<< Պետք է արդյոք, խնայել >> խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք	աշակերտ դասղեկ
XXXII	<< Ինչպես վարվել աղբի հետ >> օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թափոնների վնասակար ազդեցությանը բնության և մարդու առողջության վրա:	աշակերտ դասղեկ